01/10.5/3853-10
2010-04-14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ
ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Շիրակ Թորոսյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի լրամշակված տարբերակի վերաբերյալ։

Ըստ էության օրենքի նախագծի լրամշակված տարբերակը ներկայացված է թեև այլ խմբագրությամբ, սակայն նույն բովանդակությամբ, ինչ նախկինում։ Նախագծի ընդունումը՝

1) կխախտի հավասարության սկզբունքը բոլոր սփյուռքահայերի և, մասնավորապես, վիրահայերի միջև.

2) կարող է նպաստել Ջավախքի հայաթափմանը՝ Ջավախքի հայապահպանությանը նպաստելու փոխարեն։

Ելնելով նշվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքի նախագծի ընդունմանը։

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը։

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Լրամշակված տարբերակ
Պ-747-29.10.2009,10.03.2010-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին

Հոդված 1. «Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի դեկտեմբերի 25-ի ՀՕ-47-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 7-րդ հոդվածում ավելացնել նոր՝ 3-րդ կետ հետեւյալ բովանդակությամբ՝ «Վրաստանի Հանրապետության Սամցխե-Ջավախք եւ Քվեմո-Քարթլի նահանգներում գրանցված եւ/կամ բնակվող հայազգի քաղաքացիները Հայաստանի Հանրապետության տարածքում կարող են գտնվել առանց կացության կարգավիճակ ձեռք բերելու»։

Հոդված 2. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասերորդ օրվանից։

Հիմնավորում
«Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասինե ՀՀ օրենքի նախագծի ընդունման վերաբերյալ

Ներկայացվող նախագծով առաջարկվում է դյուրացնել Վրաստանի Սամցխե-Ջավախք եւ Քվեմո- Քարթլի նահանգներում գրանցված եւ բնակվող ազգությամբ հայ քաղաքացիների Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր բնակությունը։

Վրաստանի վերոնշյալ նահանգներում բնակվող մեր հազարավոր հայրենակիցներ բազմաթիվ թելերով կապված են Մայր հայրենիքի հետ։ Նրանցից շատերը ժամանակավոր եւ սեզոնային աշխատում ու ապրում են Հայաստանում։ Մեծ թիվ են կազմում այդ նահանգներից կրթություն կամ բուժօգնություն ստանալու նպատակով, ինչպես նաեւ ՀՀ քաղաքացիների հետ ամուսնության հետեւանքով հայրենիք ժամանած եւ բնակություն հաստատած հայերի թիվը։

Այս նախագծի ընդունումը կնպաստի Ջավախքի հայապահպանությանը։ Կացության կարգավիճակ ստանալու հետ կապված խնդիրները հաճախ ստիպում են մարդկանց հրաժարվել Վրաստանի քաղաքացիությունից եւ ձեռք բերել ՀՀ քաղաքացիություն, ինչը բերում է Ջավախքի հայաթափման։ Խնդրի լավագույն լուծումը կլիներ վերոնշյալ նահանգներում բնակվող մեր հայրենակիցներին երկքաղաքացիության տրամադրումը, սակայն դա առայժմ հնարավոր չէ հայ-վրացական համապատասխան երկկողմ պայմանագրի բացակայության պատճառով։

Ջավախքը առանձնահատուկ տարածաշրջան է եւ հայրենիքի կողմից առանձնահատուկ վերաբերմունք է պահանջվում։